

**Տ. ԶԱՎԵՆ ՎԱՐՊԱՊԵՏ ՅԱԶԻՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(15 հոկտեմբերի 2017 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»

Փառք եւ գոհութիւն մեր Երկնային Տիրոջն այս գեղեցիկ օրը Միածնաէջ Տաճարում՝ Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցելու երջանիկ առիթով:

Սիրելի՛ հավատացյալ ներկաներ, այսօր սրբազան մեր հայրերը Ս. Պատարագի արարողութեան ընդմեջէն Սուրբ Գրքից մեզ հրամարտեցին Մարկոսի Ավետարանից ընտրված մեկ հատված: Այն փոքրիկ, սակայն բավականին խորախորհուրդ պատմություն է տաճարում տեղի ունեցած մի դեպքի մասին, որը մեզ առվել հայտնի է «Այրի կնոջ երկու լուծման» վերնագրով: Վստահ եմ, որ ցանկացած անհատ իր կյանքում գոնե մեկ անգամ լսել է այդ արտահայտությունը:

Օրվա ընթերցվածը պատմեց մեզ, որ Հիսուս կանգնած էր Երուսաղեմի տաճարում ու դիտում էր, թե ինչպես էին եբրայեցիները գալիս տաճար, որի մուտքին գետեղված էին գանձանակներ: Դրանց մեջ մարդիկ ընծա էին գցում: Տաճար էին գալիս տարբեր խավի մարդիկ, սակայն այդ ամբօխի միջից Հիսուս առանձնացնում է միայն աղքատ, չքավոր, այրի կնոջ, ով գանձանակի մեջ է գցում ընդամենը երկու լուծա, որ մեկ գրոշ էր:

Մարդկային պատմության մեջ նոր չէ այն իրողությունը, որ հասարակությունը բաժանվում է սոցիալական տարբեր՝ անհավասար, խավերի: Մեկը շատ է վաստակում, մյուսն ավելի քիչ, մեկն աչքը բացում է ծայրահեղ աղքատության եւ չքավորության, մյուսը՝ ժառանգություն ստացած ահռելի կարողության մեջ, եւ այսպիսով, կամա թե ակամա, առաջ է գալիս սոցիալական անհավասարություն՝ հասարակությունը կիսվում է բարձր ու ցածր խավերի: Անվիճելի է նաեւ, որ դրամը մարդկային առեւտրական փոխհարաբերություններում գործածության դրվելուց ի վեր ամենաշատ ցանկացված եւ մինչ օրս ցանկացվող նյութն է, որով մարդը կարծում է, թե կարող է բացել երկրային վայելքների դռները: Դրամն այն նյութն է,

որով մարդը կարող է զնել ուտելիք, ըմպելիք, զարդեր, հագուստ, տուն ու բնակարան, սակայն ոչ երջանկություն եւ ոչ էլ հոգու խաղաղություն: Դրամն այն նյութն է, որ հնարավորություն է տալիս ճամփորդելու, բայց ոչ երկնքի արքայություն: Առաքյալի խոսքով՝ «զի ոչ է արքայութիւն Աստուծո կերակուր եւ ըմպելիք. այլ արդարութիւն, խաղաղութիւն եւ խնդութիւն ի հոգին Սուրբ» (Հռոմայեցիս ԺԴ. 17):

Դրամով, անշո՛ւշտ, կարող ենք շքեղաշուք պալատներ կառուցել, սակայն անկարող ենք այնտեղ բնակեցնել Աստուծոն եւ վայելել Նրա հավիտենական ներկայությունն ու խաղաղությունը: Դրամով կարող ենք վարձել աշխարհի ամենալավ բժիշկներին, սակայն անկարող ենք զնել առողջություն եւ հավիտենական կյանք:

Երկու լուծման, սիրելիներ՛ք, բնավ մեծ գումար չէր եւ չէ այսօր: Ավետարանում այս սքանչելի դրվագը յուրահատուկ գրավչություն ունի: Համաձայն հրեական օրենքի՝ կինն ամուսնու ունեցվածքը չէր ժառանգում ու, երբ նա այրիանում է, շարունակում է ապրել մարդկանց ողորմություններով: Ուստի այրին ոչ միայն ամուսնուն, այլեւ ապրելու բնականոն կարողությունից զրկված կին էր: Այդ իսկ պատճառով է, որ օրենքը թելադրում էր. «Եկն որբն եւ այրին ի քաղաքս քո, կերիցեն եւ յագեսցին. զի աւրհնեսցէ զքեզ տէր Աստուած քո յամենայն գործս քո զոր առնիցես» (Բ. Օրինաց ԺԴ. 29): Հետագայում սարկավագներ ընտրվեցին որբեւայրիներին ծառայություն անելու համար, ինչպես որ հիշատակվում է առաքյալների գործերում (Հմմտ. Գործք 2. 1):

Սիրելի՛ հավատացյալներ, պատկերացնելով տաճարի դիմաց բազմամարդ ու բազմաբոխ այդ անցուդարձը, այրի կնոջ հոգեկան, հուզական ու հոգեբանական նեղսրտվածությունը, ինչպես նաեւ հասկանալով նրա նյութական ծայրահեղ վիճակը, կարծում եմ՝ այդ կինը բողոքելու եւ տրտնջալու ավելի շատ առիթ ունեւր, քան շատերս այսօր:

Հիսուս այդ ամբոխի անցուդարձի մեջ տեսավ մի բան, որ մարդկանց համար աննկատելի էր: Նա իր մոտ կանչեց աշակերտներին եւ մատնացույց անելով չքավոր ու տառապյալ այրի կնոջը՝ ասաց. «Ձի այրին այն տառապեալ՝ չա՛տ արկ քան զամենեսեան որ արկին ի գանձանակն. քանզի ամենեքին՝ յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա՛ ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ գոյիւ չափ զկեանս իւր» (Մարկոս ԺԲ. 41-44):

Ի՞նչ է սա, սիրելի՛ հավատացյալներ, հավատքի եւ զոհաբերման գերագույն օրինա՞կ, որից կարելի է դաս քաղել, թե՞ փարիսեցիներից խաբ-

ված մի խեղճ կնոջ պատմություն: Շատերն ասում են, որ Հիսուս Քրիստոս աղքատ այս կնոջը մատնացույց անելով՝ նրան ամենեւին էլ իբրեւ լավ օրինակ չհերկայացրեց, չգովեց նրա հավատքն ու նվիրումը, բառացիորեն չզբաղատեց նրա արարքը, այլ պարզապէս ցույց տվեց փարիսեցիների կողմից խաբված մի կնոջ, որից Աստված երբեք չէր ցանկանա վերցնել ապրուստի եւ գոյատեւման վերջին երկու լուման: Բայց մի՞թե կարելի է ենթադրել, որ Հիսուս կանչել էր աշակերտներին՝ ցույց տալու խաբված կնոջը: Միգուցե շատերի մտքում ծնունդ առնի նմանատիպ կասկած, որ Հիսուս, կամ քրիստոնեական գաղափարախոսությունն առհասարակ, հաճույք է ստանում չքավորությունից: Այսպիսի եզրահանգման կհանգենք միայն այն ժամանակ, եթե ավետարանական այս սքանչելի դրվագը դիտարկենք զուտ տնտեսական, նյութական, մարդկային առեւտրական մտածողության պրիզմայով: Սակայն մի՞թե քրիստոնեությունը նյութապաշտություն է եւ նյութից գատ, նյութից վեր չկա ոչինչ: Բնավ ո՛չ:

Հիսուսը բարձրաձայնում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքավոր այրին ավելի շատ գցեց, քան գանձանակի մեջ մյուս բոլոր դրամ գցողները, քանի որ ամենքը իրենց ավելորդից գցեցին, իսկ նա, իր չքավորությունից, գցեց ամեն ինչ, որ ուներ՝ իր ամբողջ ապրուստը» (Մարկոս ԺԲ. 41-44): Այլ խոսքով՝ այրի կնոջ արարքը գնահատվեց ու արժեւորվեց Տիրոջ կողմից եւ իբրեւ նվիրումի ու անձնազոհության օրինակ՝ մատնանշվեց աշակերտներին: Այս պատմության առանցքը դրամական հաշվապահությունը չէ, այլ անմնացորդ նվիրումի ոգին:

Միրելինե՛ր, մեր բոլորիս առջեւ անտեսանելի մի գանձանակ է դրված: Մեր հայրերն այդ գանձանակի մեջ գցեցին այն, ինչով մենք այսօր հպարտանում ենք եւ կոչում հոգեւոր, մշակութային, ազգային ժառանգություն:

Սուրբ հայրապետն իր անմար կանթեղը դրեց այդ անտեսանելի գանձանակի մեջ՝ իբրեւ մեր հավատքի մշտավառ ճրագ, որ կախ է ընկած առանց պարան Արագածի կատարին՝ կասեր բանաստեղծը: Սուրբ վարդապետը 36 հավերժական զինվորներ դրեց այդ անտեսանելի գանձանակի մեջ՝ իբրեւ մեր ինքնության հավետ պահապաններ եւ պաշտպաններ: Ավարայրի Արծիվներն իրենց սուրը դրեցին այդ անտեսանելի գանձանակի մեջ՝ հանուն հավատքի եւ հայրենայաց անսասանության: Սուրբ ճգնավորն իր աղոթագիրքն ու շարակնոցը դրեց անտեսանելի գանձանակի մեջ՝ իբրեւ դարման մեր հոգիների: Եռամեծար վարդապետներն իրենց նախանձախնդիր գրչի պտուղներն այնտեղ դրեցին՝ իբրեւ ուղեցույց մեր

Հավատքի: Ծաղկող վանականներն իրենց վրձնի լավագույն արգասիքը դրեցին այդ անտեսանելի գանձանակում՝ որպես վայելչակազմ գեղեցկության խորհրդանիշ: Անցյալ տարի՝ ապրիլյան պատերազի օրերին, մեր հերոս նահատակ եղբայրներն ու զավակները, հայրերն իրենց արյունը դրեցին գանձանակի մեջ՝ իբրև հայրենիքի սահմանների անսասանության եւ շարունակական, հաղթական ու խաղաղ կյանքի առհավատչյա:

Սիրելինե՛ր, ամենքս, մեր կյանքի ողջ ընթացքում, կանգնած ենք այդ անտեսանելի գանձանակի առջև եւ ի՞նչ ենք գցում այնտեղ՝ «գոյիւ չափ զկեանս մեր, թե՞ յաւելորդաց մերոց»:

Անշուշտ, դյուրին է, սակայն պետք է խեղդե՛նք մեր եսը եւ վերածե՛նք այն անսպառ ու անվերապահ նվիրումի՝ երբեք չսպասելով արձագանքի կամ շնորհակալության, քանզի ոչ թե մենք պետք է որակավորենք մեր ծառայությունը, գնահատենք մեր արած զոհաբերությունը, այլ Նա՛ մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Ցավոք սրտի, մարդկանց միտքը մթագնած է, նրանց հետաքրքրում է «ինչքան»-ը եւ ո՛չ «ինչպես»-ը:

Սիրելինե՛ր, երկնքի արքայության հաշվապահությունն այլ է: Եթե մենք կյանքի գանձանակի մեջ դնենք մի բան եւ սպասենք, որպեսզի դրա դիմաց բազմապատիկը ստանանք, սա ոչ թե զոհաբերություն է, այլ գործարք: Վստա՛հ եղեք, որ Արարիչն Աստված տեղյակ է մեր պետքերի եւ կարիքների մասին, ինչպես ասվում է աղոթքում. «Զի Դու Տեր գիտես զպէտս եւ զկարիս առավել քան զոր խնդրեմք եւ իմանանք» (ժամագիրք):

Եկե՛ք, սիրելիներ, մի պահ մտածենք, թե որն է մեր ունեցած այն երկու լուման, որ հաճախ պահում, թաքցնում եւ փորձում ենք ավելացնել եւ հետո միայն ավելցուկից բաժին հանել մեր Արարչին: Այդ ժամանակ, երբ Աստված դիտում է մեզ, ի՞նչ է տեսնում. իրեն բաժին հանած ավելցո՞ւկ, թե՞ ամբողջ: Հարց, որի պատասխանը, վստահ եմ, լավ գիտենք:

Այրի կնոջ պատմության կենտրոնը ոչ թե գումարն է, դրամը, արտարժույթը, նյութը, այլ զոհաբերող սիրտը, որից իրապես դասեր ունենք սովորելու ամենքս:

Այս առավոտյան, ի ժամ Սուրբ Պատարագի, անկեղծ աղոթքով եւ անսուտ սիրով հայցում եմ առ Ամենաբարին Աստված, որ զորացնի, իմաստություն, շնորհք, սեր եւ խաղաղություն պարգևի բոլորիս, որպեսզի մենք եւս արժանանանք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գովեստին եւ գնահատմանը, այժմ, այս պահին եւ հավիտյան. ամեն:

